"2024Թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ" ՄՐՑՈՒՅԹԻ 15-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼ

"2024թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ" անվանակարգում հայտարարված մրցույթի 15-րդ պարբերաշրջանի ընտրական 5-րդ փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ "Հակասություններ և բացահայտումներ" ու "Գրագիտություն և իրազեկվածություն" թեմաներից, ինչպես նաև հոգեմտածողությանը վերաբերող առաջադրանքից:

Հարցաշարի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 10 միավոր):

Խնդիրը բաղկացած է երեք հարցից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր (առավելագույնը՝ 30 միավոր):

"Հակասություններ և/կամ բացահայտումներ" առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

"Գրագիտություն և իրազեկվածություն" առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

"Հոգեմտածողություն" առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 1 միավոր:

Հինգերորդ փուլին ներկայացված առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 51 միավոր:

Հինգերորդ փուլին ներկայացված առաջադրանքներից առավել բարձր միավորներ հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը կտպագրվի ամսագրի հաջորդ համարում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Հինգերորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2024թ. հունվարի 25-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2024թ. հունվարի 26-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, մարդկային ռեսուրսների կառավարման միջազգային խորհրդանիշով ոսկեզոր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2025 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

ՀԱՐՑԱՇԱՐԸ

Հարց 1. Կազմակերպությունում աշխատանքն սկսվում է ժ. 9:00-ին և ավարտվում ժ. 18:00-ին, հանգստի և սնվելու համար ընդմիջումը սկսվում է ժ.13:00-ին և ավարտվում ժ.14:00-ին:

Քանի որ, աշխատանքի պայմաններից ելնելով, հանգստի և սնվելու համար ընդմիջում տրամադրելն անհնար է, աշխատողին աշխատանքի ընթացքում տրվել է սնվելու հնարավորություն:

1. աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրում քանի՞ ժամ պետք է լրացնել տվյալ աշխատողի համար,
2. ե՞րբ պետք է ավարտվի աշխատանքային օրը,
3. ընդմիջման ժամին աշխատելու համար աշխատողի համար ձևավորվու՞մ է արտաժամյա աշխատանք, թե՞ ոչ:

(Հարցը ներկայացվում է առանց պատասխանների հնարավոր տարբերակների: Տվեք Ձեր հիմնավոր պատասխանները)

Պատասխան 1՝

1. աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրում տվյալ աշխատողի համար պետք է լրացնել 8 ժամ:
2. աշխատանքային օրը պետք է ավարտվի ժ. 17:00-ին:
3. ընդմիջման ժամին աշխատելու համար աշխատողի համար չի ձևավորվում արտաժամյա աշխատանք:

Հարց 2. Եթե դադարել է իրավական ակտով կարգավորվող իրավահարաբերությունների հետագա իրավական կարգավորման անհրաժեշտությունը, ապա իրավական ակտն՝

✓ <u>ա) ուժը կորցրած է ճանաչվում.</u>

բ) առ ոչինչ է ճանաչվում.

գ) անվավեր է ճանաչվում:

Հարց 3. Պաշտոնական պարզաբանումները՝

ա) ունեն պարտադիր բնույթ.

✓ բ) <u>չունեն պարտադիր բնույթ.</u>

գ) ունեն խորհրդատվական բնույթ:

Հարց 4. Ո՞ր դեպքերում պետական ոչ առևտրային կազմակերպությունները կարող են իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝

ա) միայն օրենքով նախատեսված դեպքերում, երբ դա ծառայում է այն խնդիրների լուծմանը, որոնց համար նրանք ստեղծվել են.

բ) միայն կառավարության որոշմամբ.

✓ գ) <u>միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով:</u>

Հարց 5. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ գործուղման մեկնելու օր է համարվում աշխատողի աշխատանքի հիմնական վայրից մեկնելու օրը, իսկ վերադառնալու օրը՝ աշխատանքի հիմնական վայր ժամանելու օրը:

Ո՞րն է աշխատողի աշխատանքի հիմնական վայրը՝

ա) կազմակերպության գտնվելու վայրը.

բ) աշխատողի բնակության վայրը.

գ) աշխատավայրի գտնվելու բնակավայրը:

"2024Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 15-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ

ԽՆԴԻՐԸ

Վարդան Վարդանի Վարդանյանը (ՆՔ 000000000000, ՀԾՀ 0000000000) ընդունվել է աշխատանքի 2020թ. հոկտեմբերի 14-ին "X&Z" կոմանդիտային ընկերակցությունում, որպես ծրագրավորող: Նա ընտանիքի հիվանդ անդամին խնամելու համար 15 օր գտնվել է ստացիոնար պայմաններում բուժում իրականացնող Երևանի "Աստղիկ" բժշկական հաստատությունում: Ընտանիքի հիվանդ անդամի խնամքն իրականացնելու երկրորդ օրը մրսել և հիվանդացել է գրիպով, ինչի պատճառով 2024թ. հոկտեմբերի 7-ից 2024 թվականի հոկտեմբերի 21-ը չի ներկայացել աշխատանքի: Բուժումն իրականացրած թերապևտ՝ Անահիտ Անահիտյանի առաջարկությամբ 2024թ. հոկտեմբերի 7-ին բացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի համապատասխան բաժնում է նշվել է 2024 թվականի հոկտեմբերի 07-ից 2024 թվականի հոկտեմբերի 21-ը:

Առողջանալուց հետո գործատուին է ներկայացրել է FF999999 սերիա/համարի ժամանակավոր անաշխատունակության թերթիկը:

Աշխատողի աշխատանքային գործունեության վերջին մեկ տարվան վերաբերող տվյալներն են՝

1. աշխատավարձի հիմնական չափը կազմել է 104 000 դրամ,

2. հիվանդությունից առաջ մեկ ամիս գտնվել է հարկադիր պարապուրդում, որի համար վճարվել է 75 000 դրամ և այդ ամսին ստացել է նաև պարգևատրություն՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով,

3. 2024թ. փետրվար և մարտ ամիսներին գտնվել է չվճարվող արձակուրդում,

4. աշխատում է որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով, համատեղության կարգով, 5-օրյա աշխատանքային շաբաթվա աշխատաժամանակի ռեժիմով՝ օրական 8-ժամյա աշխատաժամանակի տևողությամբ՝ ժ. 22:00-ից 6:00-ն,

5. վերջին 12 ամսվա ընթացքում, մինչև աշխատանքի ընդունվելը եղել է անհատ ձեռնարկատեր և տարեկան միջին եկամուտը կազմել է 1 200 000 դրամ,

Անհրաժեշտ է՝

ա. լրացնել ժամանակավոր անաշխատունակության թերթիկի գրառման ենթակա մասերը (ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ձևը տես՝ ՀՀ կառավարության 2011թ.

հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N1024-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածում),

բ. որոշել ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը, որից՝

- գործատուի միջոցների հաշվին,
- ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին,

գ. որոշել եկամտային հարկի չափը։

Պատասխան՝

Սերիա FF N 999999

ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

ՆԱԽՆԱԿԱՆ-ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ N _____ ԹԵՐԹԻԿԻ Տրված է 21.10.2024 թ.
(համապատասխանն ընդգծել) (ամսաթիվը, ամիսը)

Հիվանդության պատմություն (քարտ) N _____

Թերապևտ Անահիտ Անահիտյան _____Կ.Տ.
(թերթիկը տրամադրող բժշկի պաշտոնը, ազգանունը և ստորագրությունը)

"Աստղիկ" բժշկական կենտրոն, ք. Երևան _____
(բուժհիմնարկի անվանումն ու գտնվելու վայրը)

Վարդան Վարդանի Վարդանյան ___11_ I ___11_ I _____1984_____ 10101010101010101
(անաշխատունակի ազգանունը, անունը, հայրանունը) (ծննդյան օրը, ամիսը, տարին) (հանրային ծառայությունների համարանիշը)

_____
(բնակության վայրը)

_____

----------Հ Ա Տ Մ Ա Ն Գ Ի Ծ----------

ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ Սերիա FF N 999999 Բուժհիմնարկի Կ.Տ.

ՆԱԽՆԱԿԱՆ - ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ N_____ ԹԵՐԹԻԿԻ
(համապատասխանն ընդգծել)

"Աստղիկ" բժշկական կենտրոն, ք. Երևան
(բուժհիմնարկի անվանումն ու գտնվելու վայրը)

Տրված է 21 հոկտեմբերի 2024 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Վարդան Վարդանի Վարդանյան 11 I 11 I 1984 IOIOIOIOIOIOIOIOI
(անաշխատունակի ազգանունը, անունը, հայրանունը) (ծնն. օրը, ամիսը, տարին) (հանրային ծառայությունների համարանիշը)

ԱԽՏՈՐՈՇՈՒՄ	ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Անաշխատունակության պատճառը
[ ] հիվանդություն
[ ] հիվանդի խնամք
[ ]առողջարանային բուժում [ ] հղիության և ծննդաբերության արձակուրդ
[ ] պրոթեզավորում
_____
(համապատասխանը նշել)

Պողոսյան Պողոս Պողոսի, 01.01.1981թ., ՍԻՀ_____

(խնամքի անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում նշել հիվանդի ա.ա.հ., ծնն. օրը, ամիսը, տարին ու դիագնոզը)

ՌԵԺԻՄ
- □ ամբուլատոր
- □ ստացիոնար

_____
(համապատասխանը նշել)

Նշում՝ ռեժիմի խախտման մասին _____

Բուժող բժշկի ստորագրությունը _____

Ստացիոնարում գտնվելու ժամանակահատվածը

2024թ. հոկտեմբեր 07-ից մինչև 2024թ. հոկտեմբեր 21-ը

Գլխավոր բժշկի ստորագրությունը_____

Կ.Տ.

Ուղարկված է ԲՍՓՀ ,, ,,__ _____ 20 __թ.

Ուղեգրած բժշկի _____
(ԱԱՀ, ստորագրությունը) Կ.Տ.

ԲՍՓՀ եզրակացությունը _____
_____

ԲՍՓՀ նախագահ _____
(ԱԱՀ, ստորագրությունը) Կ.Տ.

ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ		ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՐԱԾ ԱՆՁԻ (ԱՆՁԱՆՑ)	
սկիզբը (օրը, ամիսը, տարին)	վերջը (օրը, ամիսը, տարին՝ բառերով)	պաշտոնը և ա.ա.հ.	ստորագրությունը
07.10.2024	21.10.2024	թերապևտ՝ Անահիտ Անահիտյան	

ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ_քսաներկու հոկտեմբերի 2024թ. _թերապևտ՝ Անահիտ Անահիտյան
(ամսաթիվը և ամիսը՝ բառերով կամ այլ նշումներ) (բժշկի պաշտոնը, ազգանունը և ստորագրությունը)

ԼՐԱՑՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ (ՄԻԱՅՆ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ ԴԵՊՔՈՒՄ)

Բացակայել է __07.10.2024-ից __21.10.2024-ը (ներառյալ) _____
օրը, ամիսը, տարին օրը, ամիսը, տարին (անմիջական ղեկավարի ա.ա.հ. և ստորագրությունը)

Աշխատանքային պայմանագրի տեսակը՝

☐ անորոշ ժամկետով

V որոշակի ժամկետով

Աշխատանքային շաբաթի տևողությունը

V հնգօրյա

☐ վեցօրյա

(համապատասխանը նշել)

"X&Z" կոմանդիտային ընկերակցություն կազմակերպությունում աշխատում է 2020թ.հոկտեմբերի 14-ից:

		ԹՎԵՐՈՎ	ԲԱՌԵՐՈՎ
1.	Միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու համար հիմք հանդիսացող եկամտի չափը (դրամ), այդ թվում՝	1 144 000	
1.1.	նպաստը հաշվարկող գործատուի (մայրության նպաստի դեպքում, ըստ անհրաժեշտության, բոլոր գործատուների) կողմից վճարված (հաշվարկած) եկամտի չափը (դրամ)	1 144 000	
1.2.	այլ գործատուի կողմից վճարված (հաշվարկած) եկամտի չափը (դրամ)	0	
1.3.	Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի եկամտի չափը (դրամ)	0	
2.	Միջին ամսական աշխատավարձի չափը (դրամ)	94 986	
3.	Աշխատանքային կամ օրացուցային օրերի քանակը, որոնց համար հաշվարկվել է նպաստը	11	
4.	Հաշվարկված (վճարված) նպաստի չափը (դրամ), այդ թվում՝	49 754	
4.1.	գործատուի միջոցների հաշվին (դրամ)	22 616	
4.2.	ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (դրամ)	27 139	
5.	Հաշվարկված եկամտային հարկի չափը (դրամ)	9 951,6	

ԼՐԱՑՎՈՒՄ Է ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ (ՄԻԱՅՆ ԱԶ-Ի ԿԱՄ ՆՈՏԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ)

		ԹՎԵՐՈՎ	ԲԱՌԵՐՈՎ
1.	Միջին ամսական եկամուտը հաշվարկելու համար հիմք հանդիսացած տարեկան եկամտի չափը (դրամ)		
2.	Հաշվարկված միջին ամսական եկամուտը (դրամ)		
3.	Օրացուցային օրերի քանակը, որոնց համար հաշվարկվել է նպաստը		
4.	Հաշվարկված նպաստի չափը (դրամ)		

(նպաստի չափը հաշվարկող պաշտոնատար անձի պաշտոնը,ազգանունը և ստորագրությունը) Կ.Տ.

ԼՐԱՑՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿԱՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՊԱՍՏԸ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

		ԹՎԵՐՈՎ	ԲԱՌԵՐՈՎ

1.	Վերահաշվարկված նպաստի չափը, դրամ		
2.	Վերահաշվարկված նպաստից հաշվարկված եկամտային հարկի չափը (միայն վարձու աշխատողի դեպքում), դրամ		
3.	Վճարման ենթակա գումարի չափը, դրամ		
4.	Հետպահվող գումարի չափը, դրամ		

_____

(նպաստի չափը հաշվարկող պաշտոնատար անձի պաշտոնը,ազգանունը և ստորագրությունը)

Կ.Տ.

Հաշվարկներ

Համառոտագրենք խնդրի պայմանները՝

1. Աշխատավարձի ամսական չափը կազմում է 104 000 դրամ,
2. Աշխատանքը կատարել է գիշեր ժամանակ՝ 22:00-6:00,
3. պարապուրդում գտնվելու համար հաշվարկված ամսական անվանական (կեղտոտ) աշխատավարձ կազմել է 104 000 դրամ,
4. ստացել է մեկ ամսվա աշխատավարձի չափով պարգևատրություն՝ 104 000 դրամ,
5. գտնվել է ժամանակավոր անաշխատունակ 11 օր և չի ներկայացել աշխատանքի,
6. միջին ամսական աշխատավարձ հաշվարկելու անհրաժեշտությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու ամսվա ընթացքում երկու ամիս գտնվել է չվճարվող արձակուրդում (փետրվար, մարտ ամիսներին),
7. վերջին տասներկու ամսիների աշխատանքային ստաժի բացվածքը հետևյալն է՝ 9 ամիս աշխատանքային գործունեություն, 1 ամիս պարապուրդ և 2 ամիս՝ չվճարվող արձակուրդ,
8. Մինչև աշխատանքի ընդունվելը եղել է անհատ ձեռնարկատեր և տարեկան եկուտը կազմել է 1 200 000 դրամ։

_____

Որոշել ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը, որից՝

- գործատուի միջոցների հաշվին,
- ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին,

գ. որոշել եկամտային հարկի չափը։

Այսպես՝

- ✓ որոշենք աշխատավարձի չափը՝ հաշվի առնելով գիշերային աշխատաժամանակի 30 % հավելումը։ Այն կազմում է 104 000 * 1,3 = 135 200 դրամ,
- ✓ որոշենք միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու համար հիմք հանդիսացող եկամտի չափը (դրամ)։ Այն կազմում է 1 144 000 դրամ (9*135 200 + 104 000 (Պարապ.) + 104 000 (պարգև.)
- ✓ որոշենք միջին ամսական աշխատավարձը։ Այն կազմում է 118 733 դրամ (9*135 200 + 104 000 (Պարապ.) + 104 000 (պարգև.) / 12
- ✓ որոշենք ժամանկավոր անաշխատունակության նպաստի հաշվարկման համար միջին աշխատավարձի չափը։ Այն կկազմի՝ 94 986 դրամ (49 754 * 80%)
- ✓ որոշենք մեկ օրվա միջին ամսական աշխատավարձի չափը։ Այն կկազմի՝ 4 523 (94 986/ 21)
- ✓ որոշենք ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը։ Այն կկազմի՝ 49 755 (4 523 * 11),

- ✓ որոշենք ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը՝ գործատուի միջոցների հաշվին: Այն կկազմի՝ 22 615 (4 523 * 5)
- ✓ որոշենք ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Այն կկազմի՝ 27 139
- ✓ որոշենք եկամտային հարկի չափը: Այն կկազմի՝ 9 951 (49 755 * 20 %):

Խնդրի մյուս պայմանը, որը վերաբերում է վերջին 12 ամսվա ընթացքում, մինչև աշխատանքի ընդունվելը անհատ ձեռնարկատիրոջ եկամուտներին՝ աբսուրդ է և ենթակա չէ քննարկման:

"2024Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 15-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼ

"ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ"

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդվածում օգտագործված է արտահայտություն, որը ոչ մի կապ չունի ոչ միայն օրենսգրքի նույնանման հարաբերությունները կարգավորող հոդվածներում օգտագործված արտահայտությունների, այլ նաև տվյալ արտահայտությանը վերաբերող օրենսդրական դաշտի որևէ այլ իրավական ակտերի հետ:

Բացահայտեք այդ հակասությունը և առաջարկեք լուծում:

Օրենսգրքի 144-րդ հոդվածի վերաբերյալ առակա է խմբագրական բնույթի առաջարկություն: Առաջարկությունը վերաբերում է քննարկվող հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետուն նշված իրավակարգավորմանը: Ըստ այդ կետի արտաժամյա աշխատանքում չեն ներգրավվում՝ առանց արտադրությունից կամ աշխատանքից կտրվելու՝ <u>հանրակրթական և մասնագիտական դպրոցներում</u> սովորող աշխատողները դասերի օրերին:

ՀՀ օրենադրությամբ «հանրակրթական և մասնագիտական դպրոց» հասկացություններ գոյություն չունեն: Դպրոցները, ըստ տվյալ իրավակարգավորման, վերաբերելի են, թե հանրակրթական և թե մասնագիտական ուսումնական հաստատություններին միաժամանակ, քանի որ «հանրակրթական» և «մասնագիտական» արտահայտությունները իրարից բաժանված են «և» շաղկապով, ինչն էլ ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների, Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի պահանջները:

Հետևաբար, «հանրակրթական և մասնագիտական դպրոց» արտահայտության փոխարեն պետք է նշվեր՝ «հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում» արտահայտությունը, ինչից հետո տվյալ կետը կշարադրվի հետևյալ խմբագրությամբ՝

3. Արտաժամյա աշխատանքներին չեն ներգրավվում՝

1) . . . ,

2) առանց արտադրությունից կամ աշխատանքից կտրվելու՝ հանրակրթական և մասնագիտական դպրոցներում սովորող աշխատողները դասերի օրերին.

արտաժամյա աշխատանքում չեն ներգրավվում՝ առանց արտադրությունից կամ աշխատանքից կտրվելու՝ «հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում» սովորող աշխատողները դասերի օրերին։

"2024Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 15-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼ

"ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ"

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածում առակա է տնտեսագիտորեն չհիմնավորված և "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող արտահայտություն։ Գտեք այն և առաջարկեք փոփոխություն՝ հոդվածը էլ ավելի գրագետ դարձնելու համար։

ՀՀ աշխատանքյաին օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասում առկա է կրկնություն։ Թափուր աշխատատեղը լիովին բավարար է աշխատատեղում աշխատող ընդունելու համար, էլ ինչ կարիք կա նշել նաև նոր ստեղծված աշխատատեղի մասին, չէ, որ աշխատատեղը կարող է լինել թափուր, ինչպես աշխատողի աշխատանքից ազատվելու, այնպես էլ տվյալ աշխատատեղը նոր ստեղծվելու արդյունքում։

Այսպես՝

Գործատուն իրավունք ունի ինքնուրույն, ուղղակիորեն (առանց մրցութային կամ այլ ընթացակարգերի) համալրելու թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը՝ կնքելով սույն օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրեր։ Աշխատող փնտրող գործատուն կարող է թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը համալրել նաև իր կազմակերպած մրցույթով կամ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից։ Թափուր աշխատատեղերի համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մրցույթում հաղթած անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է գործատուն։

Փաստորեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածում առակա է տնտեսագիտորեն չհիմնավորված և "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող արտահայտություն։

Տնտեսագիտորեն «թափուր» և «նոր ստեղծված աշխատատեղեր» արտահայտությունները նույնական են։ Նոր ստեղծված աշխատատեղը նույնպես թափուր աշխատատեղ է և երբ նշվում

է «թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղեր», ապա դա նույնն է թե ասենք «երեխաները կամ մինչև 18 տարեկանները»։

«Թափուր» և «նոր ստեղծված աշխատատեղեր» արտահայտություններ սահմանելիս խախտված է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, ըստ որի Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ։

Ավելին, նույն մասի 3-րդ նախադասության իրավակարգավորման մեջ, մեջբերում եմ, «Թափուր աշխատատեղերի համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մրցույթում հաղթած անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է գործատուն»։ Ինչպես նկատելի է «թափուր» արտահայտությունից հետո չենք տեսնում «նոր ստեղծված աշխատատեղեր» արտահայտությունը։ Գուցե Օրենսգիրքը մշակողները չեն ցանկացել, որ «նոր ստեղծված աշխատատեղը» համալրելու նպատակով պետք չէ կազմակերպել մրցույթ։ սակայն դա էլ իր հերթին կոպիտ միջամտություն կլինի գործատուի գործողություններին՝ ինչը անընդունելի։

"2024Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ"

ՄՐՑՈՒՅԹԻ 15-ՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ V ՓՈՒԼԻ

ՀՈԳԵՄՏԱՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Ընդհանուր առմամբ ծախսը (հարկերը չթաքցնելը, պարտադիր և օրենքով սահմանված վճարները կատարելը, աշխատավարձերը բարձրացնելը և այլն)՝ մոտիվացիա է (շահադրդում է)։ Այդպես է նշում Արթուր Սարգսյանը՝ իր "Աշխատանքային իրավունքի առանձնահատկությունները" աշխատության մեջ։

Եթե համաձայն եք, ապա մեկնաբանեք այն, եթե ոչ՝ հիմնավորեք Ձեր կարծիքը։